

Եվրոպայի խորհրդի պայմանագրերի շարք՝ թիվ 215

«Մարզական մրցումների մեքենայությունների մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիա

Մագլինգեն/Մաքուլին, 2014 թվականի սեպտեմբերի 18

Նախաբան

Եվրոպայի խորհրդի անդամ պետությունները եւ սույն Կոնվենցիան ստորագրող մյուս կողմերը,

համարելով, որ Եվրոպայի խորհրդի նպատակն է հասնել իր անդամների միջեւ առավել մեծ միասնության,

հաշվի առնելով պետությունների ղեկավարների երրորդ գագաթնաժողովի եւ Եվրոպայի խորհրդի կառավարության գործողությունների ծրագիրը (2005 թվականի մայիսի 16-17, Վարշավա), որով առաջարկվում է Եվրոպայի խորհրդի գործունեության շարունակություն՝ որպես սպորտի ոլորտի անդրադարձ,

համարելով, որ անհրաժեշտ է հետադաշյում մշակել սպորտի զարգացման համար միասնական եվրոպական եւ համաշխարհային դաշտ՝ բազմակարծիք ժողովրդավարության, օրենքի գերակայության, մարդու իրավունքների եւ մարզական էթիկայի հասկացությունների հիման վրա,

տեղյակ լինելով, որ յուրաքանչյուր երկիր եւ աշխարհում յուրաքանչյուր մարզաձեւ կարող է պոտենցիալ կերպով ենթարկվել մարզական մրցումների մեքենայությունների, եւ ընդգծելով, որ այս երեւոյթը՝ որպես սպորտում բարեվարքությանը ներկայացվող համաշխարհային սպառնալիք, կարիք ունի համաշխարհային արձագանքի, որը պետք է նաեւ աջակցություն ստանա Եվրոպայի խորհրդի անդամ չհանդիսացող պետություններից,

մտահոգություն հայտնելով մարզական մրցումների մեքենայությունների մեջ հանցավոր գործունեության եւ մասնավորապես՝ կազմակերպված հանցավորության ներգրավվածության եւ դրա անդրազգային բնույթի առնչությամբ,

վկայակոչելով «Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների

պաշտպանության մասին» կոնվենցիան (1950թ., ԵՊՇ թիվ 5) եւ դրա արձանագրությունները, «Սպորտային իրադարձությունների եւ հատկապես ֆուտբոլային խաղերի ժամանակ հանդիսատեսների կողմից բռնության եւ վատ վարքագծի մասին» եվրոպական կոնվենցիան (1985թ., ԵՊՇ թիվ 135), «Կոռուպցիայի մասին» քրեական իրավունքի կոնվենցիան (1999թ., ԵՊՇ թիվ 173) եւ «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների լվացման, հետախուզման, առգրավման եւ բռնագրավման եւ ահաբեկչության ֆինանսավորման մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիան (2005թ., ԵԽՊՇ թիվ 198),

վկայակոչելով «Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքարի մասին» Միավորված ազգերի կազմակերպության կոնվենցիան եւ կից արձանագրությունները,

վկայակոչելով նաեւ Միավորված ազգերի կազմակերպության՝ Կոռուպցիայի դեմ կոնվենցիան (2003թ.),

վկայակոչելով իրենց իրավագործության շրջանակներում առանց անհարկի ուշացման իրավախախտումներն արդյունավետորեն քննելու կարեւորությունը,

վկայակոչելով այն առանցքային դերը, որն ունի Քրեական ոստիկանության միջազգային կազմակերպությունը (Ինտերպոլ)՝ իրավապահ մարմինների միջեւ արդյունավետ համագործակցությունը, այդ թվում՝ դատական համագործակցությունը հեշտացնելու գործում,

ընդգծելով, որ մարզական կազմակերպությունները պատասխանատվություն են կրում իրենց ենթակայության տակ գտնվող անձանց կողմից կատարված՝ մարզական մրցումների մեքենայությունները հայտնաբերելու եւ պատժամիջոցներ կիրառելու համար,

ընդունելով մարզական մրցումների մեքենայությունների դեմ պայքարում արդեն իսկ ձեռք բերված արդյունքները,

համոզված լինելով, որ մարզական մրցումների մեքենայությունների դեմ արդյունավետ պայքարի համար պահանջվում է ընդլայնված, արագ, կայուն եւ պատշաճ գործող ազգային ու միջազգային համագործակցություն,

հաշվի առնելով Նախարարների կոմիտեի՝ անդամ պետություններին ուղղված՝ սպորտի մասին վերանայված եվրոպական խարտիայի վերաբերյալ թիվ R(92)13 առաջարկությունը, Սպորտի Էթիկայի վերանայված կանոնների վերաբերյալ CM/Rec(2010)9 առաջարկությունը, Սպորտի արդյունավետ կառավարման սկզբունքների վերաբերյալ Rec(2005)8 առաջարկությունը եւ Արդյունքների մեքենայությունների դեմ պայքարում սպորտում բարեվարքության խթանման

վերաբերյալ, հատկապես՝ պայմանավորված խաղերի մասով CM/Rec(2011)10 առաջարկությունը,

հաշվի առնելով հետեւյալ համաժողովների աշխատանքը եւ եզրակացությունները՝

- Եվրոպայի խորհրդի՝ սպորտի համար պատասխանատու նախարարների 11-րդ համաժողով, որն անցկացվել է 2008 թվականի դեկտեմբերի 11-ին եւ 12-ին Աթենքում,

- Եվրոպայի խորհրդի՝ սպորտի համար պատասխանատու նախարարների ոչ պաշտոնական 18-րդ համաժողով (2010 թվականի սեպտեմբերի 22, Բաքու)՝ մարզական արդյունքների մեքենայությունների (պայմանավորված խաղերի կազմակերպում) դեմ սպորտում բարեվարքության խթանման մասին,

- Եվրոպայի խորհրդի՝ սպորտի համար պատասխանատու նախարարների 12-րդ համաժողով (2012 թվականի մարտի 15, Բելգրադ)՝ մասնավորապես կապված մարզական արդյունքների մեքենայությունների դեմ նոր միջազգային իրավական փաստաթղթի մշակման հետ,

- ՅՈՒՆԵՍԿՕ-ի՝ Ֆիզիկական դաստիարակության եւ սպորտի համար պատասխանատու նախարարների եւ ղեկավար պաշտոնատար անձանց 5-րդ միջազգային համաժողով (ՄԻՆԵՓՍ V),

համոզված լինելով, որ ազգային եւ միջազգային մակարդակներում պետական իշխանության մարմինների, մարզական կազմակերպությունների, մրցումների կազմակերպիչների եւ մարզական խաղադրույքներ կատարող օպերատորների միջեւ երկխոսությունը եւ համագործակցությունը, որոնք հիմնված են փոխադարձ հարգանքի եւ վստահության վրա, էական նշանակություն ունեն մարզական արդյունքների մեքենայությունների խնդրից բխող մարտահրավերներին արդյունավետ ընդհանուր արձագանքներ որոնելու համար,

գիտակցելով, որ արդար եւ հավասար մրցակցության վրա հիմնված սպորտն իր բնույթով անկանխատեսելի է եւ պահանջում է, որ սպորտում ոչ էթիկական գործելակերպերը եւ վարքագիծը պարտադիր կերպով եւ արդյունավետորեն հաշվի առնվեն,

ընդգծելով իրենց այն համոզմունքը, որ արդյունավետ կառավարման եւ սպորտում էթիկայի սկզբունքների հետեւողական կիրառումը կարելի է գործոն է կոռուպցիան, մարզական մրցումների մեքենայությունները եւ սպորտում այլ տեսակի անօրինական գործողություններ արմատախիլ անելու հարցում օգնելու համար,

ընդունելով, որ սպորտի ինքնավարության սկզբունքին համապատասխան՝

մարզական կազմակերպությունները պատասխանատու են սպորտի համար եւ մարզական մրցումների մեքենայությունների դեմ պայքարում ունեն ինքնակարգավորման եւ կարգապահական պատասխանատվություն, սակայն պետական իշխանության մարմինները անհրաժեշտության դեպքում պաշտպանում են սպորտում բարեվարքությունը,

ընդունելով, որ մարզական խաղադրույքների, մասնավորապես՝ ապօրինի մարզական խաղադրույքների հետ կապված գործունեության զարգացումը մեծացնում է այդպիսի մեքենայությունների ռիսկը,

համարելով, որ մարզական մրցումների մեքենայությունները կարող են կապված լինել կամ կապված չլինել մարզական խաղադրույքների հետ, ինչպես նաեւ կապված լինել կամ կապված չլինել քրեական իրավախախտումների հետ, եւ որ բոլոր դեպքերում պետք է զբաղվել դրանով,

հաշվի առնելով հայեցողության այն շրջանակը, որից գործող օրենքի շրջանակներում մարզական խաղադրույքների քաղաքականության հարցում որոշումներ կայացնելիս օգտվում են պետությունները,

համաձայնեցին հետեւյալի մասին.

Գլուխ 1. Նպատակը, հիմնական սկզբունքները, սահմանումները

Հոդված 1. Նպատակը եւ հիմնական խնդիրները

1. Սույն Կոնվենցիայի նպատակն է պայքարել մարզական մրցումների մեքենայությունների դեմ՝ սպորտում բարեվարքությունը եւ մարզական էթիկայի կանոնները պահպանելու համար՝ սպորտի ինքնավարության սկզբունքին համապատասխան:

2. Սույն նպատակով Կոնվենցիայի հիմնական խնդիրներն են՝

ա. կանխարգելել, հայտնաբերել ազգային եւ միջազգային մարզական մրցումների ազգային կամ անդրազգային մեքենայությունները եւ կիրառել պատժամիջոցներ,

բ. նպաստել մարզական մրցումների մեքենայությունների դեմ պետական իշխանության մարմինների, ինչպես նաեւ սպորտում եւ մարզական խաղադրույքներում ներգրավված կազմակերպությունների միջեւ ազգային եւ միջազգային մակարդակում համագործակցությանը:

Հոդված 2. Հիմնական սկզբունքները

1. Մարզական մրցումների մեքենայությունների դեմ պայքարով, *inter alia*, ապահովվում է հետեւյալ սկզբունքները հարգելը.

- ա. մարդու իրավունքներ.
- բ. օրինականություն.
- գ. համաչափություն.
- դ. մասնավոր կյանքի եւ անձնական տվյալների պաշտպանություն:

Հոդված 3. Սահմանումները

Սույն Կոնվենցիայի նպատակներով՝

1. «Մարզական մրցում» նշանակում է մարզական կազմակերպության կողմից սահմանված այն կանոններին համապատասխան կազմակերպվող ցանկացած մարզական միջոցառում, որոնք թվարկված են Կոնվենցիայի իրականացման նկատմամբ վերահսկողության կոմիտեի կողմից ընդունված ցուցակում՝ 31.2 հոդվածին համապատասխան, եւ ճանաչված են միջազգային մարզական կազմակերպության կամ անհրաժեշտության դեպքում՝ նաեւ իրավասու այլ մարզական կազմակերպության կողմից:

2. «Մարզական կազմակերպություն» նշանակում է ցանկացած կազմակերպություն, որը կառավարում է մարզաձեւեր կամ մեկ հատուկ մարզաձեւ, եւ որն ընդգրկված է Կոնվենցիայի իրականացման նկատմամբ վերահսկողության կոմիտեի կողմից ընդունված ցուցակում՝ 31.2 հոդվածին համապատասխան, ինչպես նաեւ անհրաժեշտության դեպքում՝ իր տարածքային եւ ազգային փոխկապակցված կազմակերպությունները:

3. «Մրցումների կազմակերպիչ» նշանակում է ցանկացած մարզական կազմակերպություն կամ որեւէ այլ անձ, որը կազմակերպում է մարզական մրցումները՝ անկախ իր կազմակերպատիրական ձեւից:

4. «Մարզական մրցումների մեքենայություններ» նշանակում է կանխամտածված պայմանավորվածություն, գործողություն կամ անգործություն՝ ուղղված արդյունքների կամ մարզական մրցումների ընթացքի ոչ պատշաճ փոփոխմանը՝ վերոնշյալ մարզական մրցումների անկանխատեսելի բնույթը ամբողջությամբ կամ մասնակիորեն վերացնելու համար՝ նպատակ ունենալով

անհարկի առավելություն ստանալ իր կամ այլոց համար:

5. «Մարզական խաղադրույքներ» նշանակում է դրամով խաղադրույքների կատարում դրամային արժեքով մրցանակի ակնկալիքով, որը հետագայում առաջացնում է մարզական մրցումների հետ կապված անորոշ երեւոյթներ: Մասնավորապես՝

ա. «անօրինական մարզական խաղադրույքներ» նշանակում է ցանկացած մարզական խաղադրույք, որի տեսակը կամ օպերատորը չի թույլատրվում սպառողի գտնվելու վայրի գործող օրենսդրությամբ,

բ. «անկանոն մարզական խաղադրույքներ» նշանակում է ցանկացած սպորտային խաղադրույք, որը չի համապատասխանում տվյալ շուկայի սովորական կամ ակնկալվող օրինաչափություններին կամ կապված է սպորտային մրցումների վրա կատարվող խաղադրույքների հետ, որոնց ընթացքը ոչ սովորական բնույթի է,

գ. «կասկածելի մարզական խաղադրույքներ» նշանակում է ցանկացած սպորտային խաղադրույք, որը, ըստ հուսալի եւ միմյանց չհակասող ապացույցների, կարծես թե կապված է այն մարզական մրցման մեքենայությունների հետ, որի համար այն առաջարկվում է:

6. «Մրցման շահագրգիռ կողմեր» նշանակում է ֆիզիկական կամ իրավաբանական ցանկացած անձ, որը պատկանում է հետեւյալ կատեգորիաներից մեկին.

ա. «մարզիկ» նշանակում է ցանկացած անձ կամ անձանց խումբ, որը մասնակցում է մարզական մրցումներին,

բ. «մարզիկին օժանդակող անձնակազմ» նշանակում է ցանկացած հրահանգիչ, մարզիչ, ղեկավար, ներկայացուցիչ, թիմի անձնակազմ, թիմի պաշտոնատար անձ, բժշկական կամ պարաբժշկական անձնակազմ, որն աշխատում է մարզական մրցումներին մասնակցող կամ պատրաստվող մարզիկների հետ կամ բուժում է նրանց, ինչպես նաեւ մարզիկների հետ աշխատող ցանկացած այլ անձ,

գ. «պաշտոնատար անձ» նշանակում է ցանկացած անձ, որը հանդիսանում է մարզական մրցումներ կազմակերպող եւ խթանող կազմակերպությունների սեփականատեր, բաժնետեր, գործադիր տնօրեն կամ անձնակազմ, ինչպես նաեւ մրցավարներ, ժյուրիի անդամներ եւ այլ հավատարմագրված անձինք: Այս եզրույթը նաեւ ներառում է միջազգային մարզական կազմակերպությունների գործադիր տնօրեններին եւ անձնակազմին կամ հնարավորության դեպքում՝ այլ իրավասու մարզական կազմակերպություն, որը ճանաչում է մրցումը:

7. «Ներքին տեղեկություններ» նշանակում է ցանկացած մրցման վերաբերող

տեղեկություն, որին անձը տիրապետում է սպորտի կամ մրցումների հետ կապված իր պաշտոնի շնորհիվ՝ բացառությամբ արդեն հրապարակված կամ ընդհանուր տարածում գտած տեղեկությունների, որոնք հեշտ հասանելի են հանրության շահագրգիռ անդամներին կամ բացահայտված են համապատասխան մրցման կառավարման կանոններին եւ կանոնակարգերին համապատասխան:

Գլուխ II. Կանխարգելում, համագործակցություն եւ այլ միջոցառումներ

Հոդված 4. Ներպետական մակարդակում համակարգումը

1. Յուրաքանչյուր Կողմ համակարգում է պետական իշխանության բոլոր մարմինների՝ մարզական մրցումների մեքենայությունների դեմ պայքարի հետ կապված քաղաքականություններն ու գործողությունները:

2. Յուրաքանչյուր Կողմ իր իրավազորության սահմաններում խրախուսում է մարզական կազմակերպություններին, մրցումների կազմակերպիչներին եւ մարզական խաղադրույքների օպերատորներին համագործակցելու մարզական մրցումների մեքենայությունների դեմ պայքարում եւ անհրաժեշտության դեպքում հանձնարարում է նրանց իրականացնել սույն Կոնվենցիայի համապատասխան դրույթները:

Հոդված 5. Ռիսկերի գնահատումը եւ կառավարումը

1. Յուրաքանչյուր Կողմ, անհրաժեշտության դեպքում համագործակցելով համապատասխան մարզական կազմակերպությունների, մարզական խաղադրույքների օպերատորների, մրցումների կազմակերպիչների եւ այլ համապատասխան կազմակերպությունների հետ, բացահայտում, վերլուծում եւ գնահատում է մարզական մրցումների մեքենայությունների հետ կապված ռիսկերը:

2. Յուրաքանչյուր Կողմ մարզական կազմակերպություններին, մարզական խաղադրույքների օպերատորներին, մրցումների կազմակերպիչներին եւ յուրաքանչյուր այլ համապատասխան կազմակերպության խրախուսում է մարզական մրցումների մեքենայությունների դեմ պայքարելու համար սահմանել ընթացակարգեր եւ կանոններ եւ, անհրաժեշտության դեպքում ձեռնարկում է այնպիսի օրենսդրական կամ այլ միջոցներ, որոնք անհրաժեշտ են այս նպատակին հասնելու համար:

3. Յուրաքանչյուր Կողմ խրախուսում է իրազեկվածության մակարդակի բարձրացումը, կրթությունը, վերապատրաստումը եւ հետազոտությունները՝ մարզական մրցումների մեքենայությունների դեմ պայքարն ուժեղացնելու համար:

Հոդված 7. Մարզական կազմակերպությունները եւ մրցումների կազմակերպիչները

1. Յուրաքանչյուր Կողմ խրախուսում է մարզական կազմակերպություններին եւ մրցումների կազմակերպիչներին ընդունել եւ իրականացնել մարզական մրցումների մեքենայությունների դեմ պայքարի կանոնները, ինչպես նաեւ արդյունավետ կառավարման սկզբունքները՝ կապված, *inter alia*՝

- ա. շահերի բախման կանխարգելման, այդ թվում՝
 - մարզական մրցումներում ներգրավված մրցումների շահառուների համար մարզական մրցումների խաղադրույքներն արգելելու հետ,
 - ներքին տեղեկությունների չարաշահումը կամ տարածումը արգելելու հետ,
- բ. մարզական կազմակերպությունների եւ դրանց հետ փոխկապակցված անդամների կողմից իրենց պայմանագրային կամ այլ պարտավորություններ կատարելու հետ,
- գ. մրցույթի շահագրգիռ կողմերին ներկայացվող՝ ցանկացած այնպիսի կասկածելի գործունեության, միջադեպի, դրդապատճառի կամ մոտեցման մասին անհապաղ զեկուցելու պահանջի հետ, որը կարող է համարվել մարզական մրցումների մեքենայությունների դեմ պայքարի կանոնների խախտում:

2. Յուրաքանչյուր Կողմ խրախուսում է մարզական կազմակերպություններին ընդունել եւ իրականացնել համապատասխան միջոցներ, որպեսզի ապահովվի հետեւյալը.

- ա. մեքենայությունների հետ կապված ռիսկի ենթակա մարզական մրցումների ընթացքի ուժեղացված եւ արդյունավետ մոնիթորինգ,
- բ. պայմանավորվածություններ մարզական մրցումների մեքենայությունների հետ կապված կասկածելի գործունեության դեպքերի մասին պետական իշխանության համապատասխան մարմիններին կամ ազգային հարթակ անհապաղ զեկուցելու մասին,
- գ. արդյունավետ մեխանիզմներ՝ մարզական մրցումների մեքենայությունների հնարավոր կամ փաստացի դեպքերի վերաբերյալ ցանկացած տեղեկության բացահայտումը դյուրացնելու, այդ թվում՝ ազդարարների համար պատշաճ պաշտպանություն ապահովելու համար,
- դ. իրազեկվածություն մրցումների շահագրգիռ կողմերի միջեւ, այդ թվում՝ այն

երիտասարդ մարզիկների, որոնք ենթակա են մարզական մրցումների մեքենայությունների ռիսկի, ինչպես նաև կրթության, վերապատրաստման եւ տեղեկությունների տարածման միջոցով դրա դեմ պայքարին ուղղված ջանքեր,

ե. մարզական մրցումների համապատասխան պաշտոնատար անձանց, մասնավորապես՝ դատավորների եւ մրցավարների նշանակում հնարավորինս ուշ փուլում:

3. Յուրաքանչյուր Կողմ խրախուսում է իր մարզական կազմակերպություններին եւ նրանց միջոցով միջազգային մարզական կազմակերպություններին կիրառել հատուկ, արդյունավետ, համաչափ եւ տարհամոզիչ կարգապահական պատիժներ եւ միջոցներ՝ իրենց մարզական մրցումների, մասնավորապես՝ սույն հոդվածի 1-ին կետում նշված մարզական մրցումների մեքենայությունների դեմ պայքարի իրենց ներքին կանոնների խախտման մասով, ինչպես նաև ապահովել այլ մարզական կազմակերպությունների, հատկապես այլ երկրներում կիրառվող պատժամիջոցների փոխադարձ ճանաչումը եւ կատարումը:

4. Մարզական կազմակերպությունների կողմից սահմանված կարգապահական պատասխանատվությամբ չի բացառվում որեւէ քրեական, քաղաքացիական կամ վարչական պատասխանատվություն:

Հոդված 8. Մարզական կազմակերպությունների ֆինանսավորման միջոցները

1. Յուրաքանչյուր Կողմ ընդունում է այնպիսի օրենսդրական եւ այլ միջոցներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել այն մարզական կազմակերպությունների ֆինանսավորման պատշաճ թափանցիկությունն ապահովելու համար, որոնց ֆինանսապես աջակցում է Կողմը:

2. Յուրաքանչյուր Կողմ դիտարկում է մարզական կազմակերպություններին օգնելու հնարավորությունը՝ մարզական մրցումների մեքենայությունների դեմ պայքարելու համար, այդ թվում՝ համապատասխան մեխանիզմները ֆինանսավորելու միջոցով:

3. Յուրաքանչյուր Կողմ անհրաժեշտության դեպքում դիտարկում է ֆինանսական աջակցության դադարեցման հարցը կամ մարզական կազմակերպություններին մարզական մրցումների մեքենայությունների համար պատժի ենթարկված՝ մրցումների շահագրգիռ կողմերից ստացվող ֆինանսական աջակցությունը պատժամիջոցի տեւողության ընթացքում դադարեցնելու

առաջարկություն ներկայացնելու հարցը:

4. Անհրաժեշտության դեպքում յուրաքանչյուր Կողմ ձեռնարկում է քայլեր ցանկացած այնպիսի մարզական կազմակերպությունից ստացված որոշակի կամ ամբողջ ֆինանսական կամ սպորտին առնչվող աջակցությունը դադարեցնելու համար, որոնք արդյունավետորեն չեն կիրառում մարզական մրցումների մեքենայությունների դեմ պայքարի կանոնակարգերը:

Հոդված 9. Խաղադրույքները կարգավորող մարմնի կամ այլ պատասխանատու մարմնի կամ մարմինների հետ կապված միջոցները

1. Յուրաքանչյուր Կողմ սահմանում է մեկ կամ ավելի պատասխանատու մարմիններ, որոնց, ըստ Կողմի իրավակարգի, վերապահվել են մարզական խաղադրույքների կարգավորման իրականացումը եւ մարզական խաղադրույքների հետ կապված մարզական մրցումների մեքենայությունների դեմ պայքարին ուղղված համապատասխան միջոցների կիրառումը, այդ թվում, անհրաժեշտության դեպքում՝

ա. սահմանված ժամկետներում տեղեկությունների փոխանակում այլ համապատասխան մարմինների կամ ազգային հարթակի հետ՝ անօրինական, անկանոն կամ կասկածելի մարզական խաղադրույքների, ինչպես նաեւ սույն Կոնվենցիայում նշված կամ սույն Կոնվենցիային համապատասխան հաստատված կանոնակարգերի խախտումների համար.

բ. մարզական խաղադրույքների առաջարկի սահմանափակում ազգային մարզական կազմակերպությունների եւ մարզական խաղադրույքների օպերատորների հետ խորհրդակցելուց հետո՝ մասնավորապես բացառելով այն մարզական մրցումները,

- որոնք նախատեսված են 18 տարին չլրացած անձանց համար, կամ
- որտեղ կազմակերպչական պայմանները եւ (կամ) խաղադրույքները մարզական առումով բավարար չեն.

գ. մարզական խաղադրույքների արտադրանքի տեսակների եւ օբյեկտների վերաբերյալ տեղեկությունների տրամադրում նախապես՝ ի աջակցություն իրենց իրավասության շրջանակում մարզական մեքենայությունների ռիսկերը սահմանելու եւ կառավարելու նրանց ջանքերի.

դ. մարզական խաղադրույքներում այնպիսի վճարման միջոցների համակարգված օգտագործում, որոնք թույլ են տալիս որոշակի շեմից բարձր ֆինանսական հոսքեր՝ սահմանված յուրաքանչյուր Կողմի կողմից, որպեսզի

հնարավոր լինի հետեւել մասնավորապես ուղարկողներին, ստացողներին եւ գումարները.

ե. մեխանիզմներ, մարզական կազմակերպությունների եւ անհրաժեշտության դեպքում՝ սպորտային խաղադրույքների օպերատորների հետ եւ նրանց միջեւ համագործակցությամբ՝ կանխելու համար, որ մրցումների շահագրգիռ կողմերը խաղադրույքներ կատարեն մարզական մրցումների վրա, ինչը համապատասխան մարզական կանոնների կամ կիրառելի օրենքի խախտում է համարվում.

զ. համաձայն ներպետական օրենսդրության՝ խաղադրույքների կասեցում այն մրցումների ժամանակ, որոնց համար համապատասխան զգուշացում է ներկայացվել:

2. Յուրաքանչյուր Կողմ Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին փոխանցում է սույն հոդվածի 1-ին կետի համաձայն սահմանված մարմնի կամ մարմինների անվանումը եւ հասցեները:

Հոդված 10. Մարզական խաղադրույքների օպերատորները

1. Յուրաքանչյուր Կողմ ընդունում է այնպիսի օրենսդրական կամ այլ միջոցներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել կանխելու համար շահերի բախումն ու ներքին տեղեկությունների չարաշահումն այն ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կողմից, որոնք ներգրավված են ապահովելու մարզական խաղադրույքների արտադրանքի տրամադրումը՝ մասնավորապես հետեւյալի նկատմամբ սահմանափակումներ կիրառելու միջոցով՝

ա. ֆիզիկական կամ իրավաբանական անձինք, որոնք ներգրավված են մարզական խաղադրույքների արտադրանքի տրամադրմանը՝ խաղադրույքներ կատարելով իրենց արտադրանքի վրա.

բ. մարզական կազմակերպության հովանավորի կամ մասնակի սեփականատիրոջ պաշտոնի չարաշահումը մարզական մրցման մեքենայություններին նպաստելու կամ ներքին տեղեկությունները չարաշահելու համար.

գ. մրցման շահագրգիռ կողմերը, որոնք զբաղված են այն մրցման հավանական խաղադրույքները կազմելով, որում նրանք ներգրավված են,

դ. յուրաքանչյուր մարզական խաղադրույք կատարող օպերատոր, որը վերահսկում է մրցման կազմակերպչին կամ շահագրգիռ կողմին, ինչպես նաեւ ցանկացած մարզական խաղադրույք կատարող օպերատոր, որը վերահսկվում է այդ մրցման կազմակերպչի կամ շահագրգիռ անձի կողմից, առաջարկում է մրցման

խաղաղորույք, որում այս մրցույթի կազմակերպիչը կամ շահագրգիռ կողմը ներգրավված է:

2. Յուրաքանչյուր Կողմ խրախուսում է իր մարզական խաղաղորույքների օպերատորներին եւ նրանց միջոցով մարզական խաղաղորույքների օպերատորներին միջազգային կազմակերպություններին բարձրացնել իրազեկության մակարդակն իրենց սեփականատերերի եւ աշխատակիցների շրջանում՝ մարզական մրցումների մեքենայությունների դեմ պայքարի եւ դրա հետեւանքների վերաբերյալ կրթության, վերապատրաստման եւ տեղեկությունների տարածման միջոցով:

3. Յուրաքանչյուր Կողմ ընդունում է այնպիսի օրենսդրական եւ այլ միջոցներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել մարզական խաղաղորույքների օպերատորներին պարտավորեցնելու համար, որ նրանք անհապաղ տեղեկացնեն անկանոն կամ կասկածելի խաղաղորույքների մասին խաղաղորույքները կարգավորող մարմնին, այլ պատասխանատու մարմնի կամ մարմինների կամ ազգային հարթակին:

Հոդված 11. Մարզական անօրինական խաղաղորույքների դեմ պայքարը

1. Նպատակ ունենալով պայքարել մարզական մրցումների մեքենայությունների դեմ՝ յուրաքանչյուր Կողմ ուսումնասիրում է անօրինական մարզական խաղաղորույքների օպերատորների դեմ պայքարելու առավել համապատասխան միջոցներ եւ դիտարկում է միջոցներ ձեռնարկելու հարցը՝ համաձայն համապատասխան Կողմի տարածքում կիրառելի օրենքի, ինչպես օրինակ՝

ա. հեռավար անօրինական մարզական խաղաղորույքների օպերատորներին փակում կամ ուղղակի եւ անուղղակի հասանելիության սահմանափակում եւ Կողմի իրավազրկության ներքո գտնվող անօրինական հիմքերով գործող մարզական խաղաղորույքների օպերատորների փակում.

բ. անօրինական մարզական խաղաղորույքների օպերատորների եւ սպառողների միջեւ ֆինանսական հոսքերի արգելափակում.

գ. գովազդի արգելում անօրինական մարզական խաղաղորույքների օպերատորների համար.

դ. սպառողների իրազեկության մակարդակի բարձրացում՝ անօրինական մարզական խաղաղորույքների հետ կապված ռիսկերի վերաբերյալ:

Գլուխ III. Տեղեկությունների փոխանակում

Հոդված 12. Տեղեկությունների փոխանակումն իրավասու պետական իշխանության մարմինների, մարզական կազմակերպությունների եւ մարզական խաղադրույքների օպերատորների միջեւ

1. Չհակասելով 14-րդ հոդվածին՝ յուրաքանչյուր Կողմ, ազգային եւ միջազգային մակարդակներում եւ իր ներպետական օրենսդրությանը համապատասխան, նպաստում է տեղեկությունների փոխանակմանը պետական իշխանության համապատասխան մարմինների, մարզական կազմակերպությունների, մրցման կազմակերպիչների, մարզական խաղադրույքների օպերատորների եւ ազգային հարթակների միջեւ: Մասնավորապես յուրաքանչյուր Կողմ պարտավորվում է ստեղծել մեխանիզմներ համապատասխան տեղեկությունների փոխանակման համար այն դեպքում, երբ այդ տեղեկությունները կարող են օգնել իրականացնելու 5-րդ հոդվածում նշված ռիսկերի գնահատումը եւ մասնավորապես՝ մրցման կազմակերպիչներին խաղադրույքների արտադրանքի տեսակների եւ օբյեկտների վերաբերյալ տեղեկությունների ընդլայնված տրամադրումը, ինչպես նաեւ նախաձեռնելու կամ իրականացնելու քննություն կամ վարույթ՝ կապված մարզական մրցումների մեքենայությունների հետ:

2. Հարցման հիման վրա այդպիսի տեղեկություններ ստացողը ներպետական օրենսդրությանը համապատասխան եւ առանց հապաղելու տեղեկացնում է կազմակերպությանը կամ իրավասու մարմնին՝ փոխանակելով տեղեկություններ այդ կապակցությամբ ձեռնարկած միջոցների վերաբերյալ:

3. Յուրաքանչյուր Կողմ ուսումնասիրում է համագործակցության եւ տեղեկությունների փոխանակման զարգացման եւ կատարելագործման հնարավոր եղանակներն անօրինական մարզական խաղադրույքների դեմ պայքարի համատեքստում, ինչպես սահմանված է սույն Կոնվենցիայի 11-րդ հոդվածով:

Հոդված 13. Ազգային հարթակը

1. Յուրաքանչյուր Կողմ ներդնում է ազգային հարթակ՝ ուղղված մարզական մրցումների մեքենայություններին: Համապատասխան ներպետական օրենսդրության համաձայն՝ ազգային հարթակը, *inter alia*՝

ա. ծառայում է որպես տեղեկատվական հանգույց՝ հավաքագրելով եւ տարածելով այնպիսի տեղեկություններ, որոնք կապված են համապատասխան կազմակերպություններում եւ իրավասու մարմիններում մարզական մրցումների մեքենայությունների դեմ պայքարի հետ:

բ. համակարգում է մարզական մրցումների մեքենայությունների դեմ պայքարը.

գ. ստանում, կենտրոնացնում եւ վերլուծում է այն մարզական մրցումների անկանոն եւ կասկածելի խաղադրույքների վերաբերյալ տեղեկությունները, որոնք իրականացվում են Կողմի տարածքում, եւ անհրաժեշտության դեպքում ներկայացնում է զգուշացում.

դ. պետական իշխանության մարմիններին, մարզական կազմակերպությունների եւ (կամ) մարզական խաղադրույքների օպերատորներին փոխանցում է տեղեկություններ սույն Կոնվենցիայում նշված օրենքների կամ մարզական կանոնակարգերի հնարավոր խախտումների վերաբերյալ.

ե. ազգային եւ միջազգային մակարդակներում համագործակցում է բոլոր կազմակերպությունների եւ համապատասխան իրավասու մարմինների հետ՝ ներառելով մյուս պետությունների ազգային հարթակները:

2. Յուրաքանչյուր Կողմ Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին տրամադրում է ազգային հարթակի անուններն ու հասցեները:

Հոդված 14. Անձնական տվյալների պաշտպանությունը

1. Յուրաքանչյուր Կողմ ընդունում է այնպիսի օրենսդրական եւ այլ միջոցներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել երաշխավորելու համար, որ մարզական մրցումների մեքենայությունների դեմ ուղղված բոլոր գործողությունները համապատասխանեն անձնական տվյալների պաշտպանության վերաբերյալ համապատասխան ազգային եւ միջազգային օրենքներին եւ չափանիշներին, մասնավորապես՝ սույն Կոնվենցիայով կարգավորվող տեղեկությունների փոխանակման հարցում:

2. Յուրաքանչյուր Կողմ ընդունում է այնպիսի օրենսդրական կամ այլ միջոցներ, որոնք անհրաժեշտ են երաշխավորելու համար, որ սույն Կոնվենցիայով կարգավորվող պետական իշխանության մարմինները եւ կազմակերպությունները ձեռնարկեն անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու համար, որ անձնական տվյալների հավաքագրման, մշակման եւ փոխանակման ժամանակ, անկախ այդ փոխանակումների բնույթից, պատշաճ ուշադրություն դարձվի օրինականության, համարժեքության, համապատասխանության եւ հավաստիության սկզբունքներին, ինչպես նաեւ տվյալների անվտանգությանը եւ տվյալների սուբյեկտների իրավունքներին:

3. Յուրաքանչյուր Կողմ իր օրենսդրությամբ նախատեսում է, որ սույն

Կոնվենցիայով կարգավորվող պետական իշխանության մարմինները եւ կազմակերպությունները պետք է ապահովեն, որ սույն Կոնվենցիայի նպատակների համար տվյալների փոխանակումը չանցնի փոխանակման նշված նպատակների իրականացման համար անհրաժեշտ նվազագույն շեմից:

4. Յուրաքանչյուր Կողմ կոչ է անում սույն Կոնվենցիայով կարգավորվող պետական իշխանության տարբեր մարմիններին եւ կազմակերպություններին ապահովել այնպիսի անհրաժեշտ տեխնիկական միջոցներ, որոնք ուղղված են փոխանակվող տվյալների անվտանգության ապահովմանը, եւ դրանց հուսալիությունն ու ամբողջականությունը, ինչպես նաեւ տվյալների փոխանակման համակարգերի հասանելիությունն ու ամբողջականությունը, դրանցից օգտվողների նույնականացումը երաշխավորելուն:

Գլուխ IV. Նյութական քրեական իրավունքը եւ կատարման հետ կապված համագործակցությունը

Հոդված 15. Մարզական մրցումների մեքենայությունների հետ կապված իրավախախտումները

1. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ իր ներպետական օրենսդրությունը հնարավորություն տա քրեական պատասխանատվության ենթարկել մարզական մրցումների մեքենայությունները, երբ այն ներառում է հարկադրանքի, կոռուպցիայի կամ խարդախության գործողություններ, ինչպես սահմանված է իր ներպետական օրենսդրությամբ:

Հոդված 16. Մարզական մրցումների մեքենայությունների հետ կապված իրավախախտումներից ստացված եկամուտների լվացումը

1. Յուրաքանչյուր Կողմ ընդունում է այնպիսի օրենսդրական եւ այլ միջոցներ, որոնք իր ներպետական օրենսդրության համաձայն կարող են անհրաժեշտ լինել ճանաչելու որպես քրեական իրավախախտումներ, ինչպես նշված է «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների լվացման, հետախուզման, առգրավման եւ բռնագրավման եւ ահաբեկչության ֆինանսավորման մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի (2005թ., ԵԽՊՇ թիվ 198) 9-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ կետերում, «Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքարի մասին» Միավորված ազգերի կազմակերպության կոնվենցիայի (2000թ.) 6-րդ հոդվածի 1-ին կետում, Միավորված ազգերի կազմակերպության՝ Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի (2003թ.) 23-րդ հոդվածի 1-ին կետում, ըստ դրանցում նշված պայմանների, երբ

եկամուտ ստանալու համար կատարված է Կոնվենցիայի 15-րդ եւ 17-րդ հոդվածներում նշված իրավախախտում, եւ ցանկացած դեպքում, երբ առկա է շորթում, կաշառակերություն եւ խարդախություն:

2. 1-ին կետում նշված իրավախախտումների շրջանակի վերաբերյալ որոշում կայացնելիս յուրաքանչյուր Կողմ, իր ներպետական օրենսդրությանը համապատասխան, կարող է որոշել, թե ինչպես պետք է սահմանի այդ իրավախախտումները եւ բոլոր այն կոնկրետ տարրերի բնույթը, որոնք դրանք լուրջ են դարձնում:

3. Յուրաքանչյուր Կողմ դիտարկում է փողերի լվացման կանխարգելման իր շրջանակում մարզական մրցումների մեքենայությունները ներառելու հարցը՝ պահանջելով, որ մարզական խաղադրույքների օպերատորները կիրառեն հաճախորդների պատշաճ ուսումնասիրության, հաշվառման եւ հաշվետվություններ ներկայացնելու պահանջները:

Հոդված 17. Օգնելը եւ օժանդակելը

1. Յուրաքանչյուր Կողմ ընդունում է այնպիսի օրենսդրական եւ այլ միջոցներ, որոնք իրենց ներպետական օրենսդրության համաձայն կարող են անհրաժեշտ լինել որպես քրեական իրավախախտումներ սահմանելու դիտավորությամբ կատարված՝ Կոնվենցիայի 15-րդ հոդվածում նշված քրեական իրավախախտումներից որեւէ մեկի կատարմանն օգնելը եւ օժանդակելը:

Հոդված 18. Կորպորատիվ պատասխանատվությունը

1. Յուրաքանչյուր Կողմ ընդունում է այնպիսի օրենսդրական եւ այլ միջոցներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել ապահովելու համար, որ իրավաբանական անձինք կարող են պատասխանատվության ենթարկվել սույն Կոնվենցիայի 15-17-րդ հոդվածներում նշված այն իրավախախտումների համար, որոնք կատարվել են նրանց օգտին ցանկացած ֆիզիկական անձի կողմից, որը գործել է կա՛մ անհատապես, կա՛մ որպես իրավաբանական անձին պատկանող մարմնի անդամ, որը զբաղեցնում է առաջատար պաշտոն իրավաբանական անձի կազմում՝ հետեւյալի հիման վրա՝

- ա. իրավաբանական անձին ներկայացնելու լիազորություն.
- բ. իրավաբանական անձի անունից որոշումներ կայացնելու լիազորություն.
- գ. իրավաբանական անձի նկատմամբ վերահսկողություն իրականացնելու լիազորություն:

2. Կողմի իրավական սկզբունքներին համապատասխան՝ իրավաբանական անձի պատասխանատվությունը կարող է լինել քրեական, քաղաքացիական կամ վարչական:

3. Սույն հոդվածի 1-ին կետով նախատեսված դեպքերից բացի՝ յուրաքանչյուր Կողմ ձեռնարկում է իրավաբանական անձանց պատասխանատվության ենթարկելու համար անհրաժեշտ միջոցներ, եթե սույն հոդվածի 1-ին կետում նշված ֆիզիկական անձի կողմից վերահսկողության կամ հսկողության բացակայությունը հնարավոր է դարձրել սույն Կոնվենցիայի 15-17-րդ հոդվածներում նշված իրավախախտման կատարումն իր իրավասության տակ գտնվող ֆիզիկական անձի կողմից՝ ի շահ այդ իրավաբանական անձի:

4. Այդ պատասխանատվությունը չպետք է հակասի իրավախախտումը կատարած ֆիզիկական անձանց քրեական պատասխանատվությանը:

Գլուխ V. Իրավագործություն, քրեական դատավարություն եւ հարկադիր կատարման միջոցներ

Հոդված 19. Իրավագործությունը

1. Յուրաքանչյուր Կողմ ընդունում է այնպիսի օրենսդրական կամ այլ միջոցներ, որոնք անհրաժեշտ են սույն Կոնվենցիայի 15-17-րդ հոդվածներում նշված իրավախախտումներից որեւէ մեկի նկատմամբ իրավագործություն սահմանելու համար, եթե այդ իրավախախտումը կատարվել է՝

- ա. իր տարածքում, կամ
- բ. իր դրոշի ներքո գտնվող նավի վրա, կամ
- գ. իր ներպետական օրենսդրության համաձայն գրանցված օդանավի վրա, կամ
- դ. իր քաղաքացիներից մեկի կողմից կամ իր տարածքում մշտապես բնակվող անձի կողմից:

2. Յուրաքանչյուր Կողմ կամ Եվրոպական միությունը ստորագրման պահին կամ վավերացման, ընդունման կամ հաստատման մասին փաստաթուղթն ի պահ հանձնելու ժամանակ կարող է Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին ուղղված հայտարարության միջոցով հայտարարել, որ իրավունք է վերապահում չկիրառելու կամ միայն հատուկ դեպքերում կամ պայմաններում կիրառելու սույն հոդվածի 1-ին

կետի «դ» ենթակետով սահմանված իրավազորության կանոնները:

3. Յուրաքանչյուր Կողմ ձեռնարկում է անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցներ, որոնք անհրաժեշտ են սույն Կոնվենցիայի 15-17-րդ հոդվածներում նշված իրավախախտումների նկատմամբ իրավազորություն սահմանելու համար այն դեպքերում, երբ կասկածյալը գտնվում է իր տարածքում եւ չի կարող հանձնվել մյուս Կողմին իր քաղաքացիության հիման վրա:

4. Եթե սույն Կոնվենցիայի 15- 17-րդ հոդվածներում նշված՝ ենթադրաբար կատարված որեւէ իրավախախտման նկատմամբ իր իրավազորության առկայության մասին պնդում է մեկից ավելի Կողմ, ապա ներգրավված Կողմերն անհրաժեշտության դեպքում խորհրդակցում են միմյանց հետ՝ քրեական հետապնդման նպատակով առավել համապատասխան իրավազորություն որոշելու համար:

5. Չհակասելով միջազգային իրավունքի ընդհանուր կանոններին՝ սույն Կոնվենցիայով չի բացառվում որեւէ Կողմի կողմից իր ներպետական օրենսդրությանը համապատասխան կիրառվող որեւէ քրեական, քաղաքացիական եւ վարչական իրավազորություն:

Հոդված 20. Էլեկտրոնային ապացույցների ապահովմանն ուղղված միջոցները

1. Յուրաքանչյուր Կողմ ընդունում է օրենսդրական կամ այլ միջոցներ՝ ապահովելու էլեկտրոնային ապացույցները սույն Կոնվենցիայի 15-17-րդ հոդվածներում նշված իրավախախտումները քննելիս, *inter alia*, պահպանված համակարգչային տվյալների արագ պահպանման, տրաֆիկի տվյալների արագ պահպանման եւ բացահայտման, արտադրության պատվերների, պահպանված համակարգչային տվյալների որոնման եւ առգրավման, տրաֆիկի տվյալներն իրական ժամանակում հավաքագրելու եւ բովանդակության տվյալների գաղտնալսման միջոցով՝ իր ներպետական օրենսդրությանը համապատասխան:

Հոդված 21. Պաշտպանության միջոցները

1. Յուրաքանչյուր Կողմ դիտարկում է այնպիսի իրավական միջոցներ ձեռնարկելու հարցը, որոնք կարող են անհրաժեշտ լինել ապահովելու արդյունավետ պաշտպանությունը հետեւյալի համար՝

ա. անձինք, որոնք բարեխղճորեն եւ ողջամիտ հիմքերով տրամադրում են տեղեկություններ սույն Կոնվենցիայի 15-17-րդ հոդվածներում նշված

իրավախախտումների վերաբերյալ կամ այլ կերպ համագործակցում են քննություն կամ քրեական հետապնդում իրականացնող մարմինների հետ.

բ. վկաներ, որոնք ցուցմունք են տալիս այդ իրավախախտումների վերաբերյալ.

գ. անհրաժեշտության դեպքում «ա» եւ «բ» ենթակետերում նշված անձանց ընտանիքի անդամներ:

Գլուխ VI. Պատժամիջոցները եւ միջոցառումները

Հոդված 22. Ֆիզիկական անձանց նկատմամբ կիրառվող քրեական պատժամիջոցները

1. Յուրաքանչյուր Կողմ ձեռնարկում է անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցներ՝ ապահովելու համար, որ սույն Կոնվենցիայի 15-17-րդ հոդվածներում նշված իրավախախտումները ֆիզիկական անձի կողմից իրականացվելու դեպքում պատժվեն արդյունավետ, համաչափ եւ տարհամոզիչ պատժամիջոցներով, այդ թվում՝ դրամական պատժամիջոցներով՝ հաշվի առնելով իրավախախտումների ծանրությունը: Այս պատժամիջոցները ներառում են ազատությունից զրկելու ձեռով պատիժները, որոնք կարող են հանգեցնել հանձնման, ինչպես սահմանված է ներպետական օրենսդրությամբ:

Հոդված 23. Իրավաբանական անձանց նկատմամբ կիրառվող պատժամիջոցները

1. Յուրաքանչյուր Կողմ ձեռնարկում է անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցներ՝ ապահովելու համար, որ 18-րդ հոդվածին համապատասխան պատասխանատվություն կրող այդ իրավաբանական անձը ենթարկվի արդյունավետ, համաչափ եւ տարհամոզիչ պատժամիջոցների, այդ թվում՝ դրամական պատժամիջոցների եւ հնարավոր այլ միջոցների, ինչպիսիք են օրինակ՝

ա. առետրային գործունեությամբ զբաղվելու իրավունքից ժամանակավորապես կամ մշտապես զրկելը,

բ. դատական վերահսկողության տակ առնելը,

գ. լուծարման մասին դատարանի որոշումը:

Հոդված 24. Վարչական պատժամիջոցները

1. Յուրաքանչյուր Կողմ անհրաժեշտության դեպքում ընդունում է իր ներպետական օրենսդրությամբ պատժելի արարքների հետ կապված այնպիսի օրենսդրական կամ այլ միջոցներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել արդյունավետ, համաչափ եւ տարհամոզիչ պատժամիջոցներով եւ միջոցներով սույն Կոնվենցիային համապատասխան սահմանված խախտումները պատժելու համար՝ վարչական մարմինների կողմից ներկայացված վարույթից հետո, որտեղ որոշումը կարող է հանգեցնել իրավազորություն ունեցող դատարանում վարույթ հարուցելու:

2. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է վարչական միջոցների կիրառումը: Դա կարող է կատարվել խաղադրույքները կարգավորող մարմնի կողմից կամ այլ պատասխանատու մարմնի կամ մարմինների կողմից՝ իր ներպետական օրենսդրությանը համապատասխան:

Հոդված 25. Առգրավումը եւ բռնագրավումը

1. Յուրաքանչյուր Կողմ, ներպետական օրենսդրությանը համապատասխան, ձեռնարկում է անհրաժեշտ օրենսդրական եւ այլ միջոցներ՝ հետեւյալի առգրավումը եւ բռնագրավումը թույլատրելու համար՝

ա. սույն Կոնվենցիայի 15-17-րդ հոդվածներում նշված իրավախախտումները կատարելու համար օգտագործված կամ օգտագործման համար նախատեսված ապրանքներ, փաստաթղթեր եւ այլ գործիքներ.

բ. այդ իրավախախտումներից ստացված եկամուտները կամ այդ եկամուտներին համարժեք արժեք ունեցող գույքը:

Հոդված 26. Քրեական գործերով միջազգային համագործակցությանն ուղղված միջոցները

1. Կողմերը, սույն Կոնվենցիայի դրույթներին եւ կիրառելի համապատասխան միջազգային ու տարածաշրջանային փաստաթղթերի եւ միասնական կամ փոխադարձության օրենսդրության ու ներպետական օրենսդրության հիման վրա համաձայնեցված պայմանավորվածություններին համապատասխան, հնարավորինս համագործակցում են միմյանց հետ՝ սույն Կոնվենցիայի 15- 17-րդ հոդվածներում նշված իրավախախտումների հետ կապված քննության, քրեական հետապնդման եւ դատական վարույթի իրականացման, այդ թվում՝ բռնագրավման կամ առգրավման նպատակով:

2. Կողմերը, հանձնման եւ քրեական գործերով փոխադարձ օգնության մասին կիրառելի միջազգային, տարածաշրջանային եւ երկկողմ պայմանագրերին եւ իրենց ներպետական օրենսդրությանը համապատասխան, հնարավորության սահմաններում համագործակցում են՝ կապված սույն Կոնվենցիայի 15-17-րդ հոդվածներում նշված իրավախախտումների հետ:

3. Միջազգային համագործակցության հարցերում, երբ կրկնահանցագործությունը համարվում է պահանջ, այն համարվում է կատարված՝ անկախ նրանից՝ հարցումն ստացած պետության օրենսդրությամբ այդ իրավախախտումը դասվում է նույն կատեգորիային, թե օգտագործվում է նույն եզրույթն իրավախախտումը նկարագրելու համար այնպես, ինչպես հարցում ներկայացնող պետությունում, եթե իրավախախտման հիմքում ընկած վարքագիծը, որի համար իրավական փոխադարձ օգնություն կամ հանձնում է պահանջվում, երկու Կողմերի օրենսդրությամբ համարվում է քրեական իրավախախտում:

4. Եթե այն Կողմը, որն իրականացնում է հանձնում կամ ցուցաբերում է քրեական գործերով փոխադարձ իրավական օգնություն (ինչը հնարավոր է միայն պայմանագրի առկայության դեպքում) ստանում է հանձնման կամ քրեական գործերով փոխադարձ իրավական օգնության վերաբերյալ հարցում այն Կողմի կողմից, որի հետ որեւէ այդպիսի պայմանագիր չի կնքել, կարող է, գործելով միջազգային իրավունքով ստանձնած իր պարտավորություններին լիովին համապատասխան եւ հաշվի առնելով հարցումն ստացած Կողմի ներպետական օրենսդրությամբ նախատեսված պայմանները, սույն Կոնվենցիան դիտարկել որպես իրավական հիմք՝ սույն Կոնվենցիայի 15-17-րդ հոդվածներում նշված իրավախախտումների հետ կապված հանձնման կամ քրեական գործերով փոխադարձ իրավական օգնության համար:

Հոդված 27. Միջազգային համագործակցության այլ միջոցներ՝ կապված կանխարգելման հետ

1. Յուրաքանչյուր Կողմ անհրաժեշտության դեպքում ձգտում է ինտեգրել մարզական մրցումների մեքենայությունների կանխարգելումը եւ պայքարը աջակցության ծրագրերում՝ ի շահ երրորդ պետությունների:

Հոդված 28. Միջազգային համագործակցությունը միջազգային մարզական կազմակերպությունների հետ

1. Յուրաքանչյուր Կողմ, իր ներպետական օրենսդրությանը

համապատասխան, մարզական մրցումների մեքենայությունների դեմ պայքարում համագործակցում է միջազգային մարզական կազմակերպությունների հետ:

Գլուխ VIII. Իրականացման նկատմամբ վերահսկողությունը

Հոդված 29. Տեղեկություններ տրամադրելը

1. Յուրաքանչյուր Կողմ սույն Կոնվենցիայի պայմանները բավարարելու նպատակով իր կողմից ձեռնարկված օրենսդրական եւ այլ միջոցների վերաբերյալ բոլոր համապատասխան տեղեկությունները Եվրոպայի խորհրդի պաշտոնական լեզուներից որեւէ մեկով ուղարկում է Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին:

Հոդված 30. Կոնվենցիայի իրականացման նկատմամբ վերահսկողություն իրականացնող կոմիտեն

1. Սույն Կոնվենցիայի նպատակներով սույնով ստեղծվում է Կոնվենցիայի իրականացման նկատմամբ վերահսկողություն իրականացնող կոմիտե:

2. Յուրաքանչյուր Կողմ Կոնվենցիայի իրականացման նկատմամբ վերահսկողություն իրականացնող կոմիտեում կարող է ներկայացված լինել մեկ կամ ավելի պատվիրակի միջոցով, ներառյալ՝ սպորտի համար պատասխանատու, իրավապահ կամ խաղադրույքները կարգավորող պետական իշխանության մարմինները: Յուրաքանչյուր Կողմ ունի մեկ ձայնի իրավունք:

3. Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովը, ինչպես նաեւ Եվրոպայի խորհրդի միջկառավարական մյուս համապատասխան կոմիտեները բազմաոլորտ եւ բազմապրոֆիլ մոտեցումներին աջակցելու նպատակով Կոնվենցիայի իրականացման նկատմամբ վերահսկողություն իրականացնող կոմիտեում յուրաքանչյուրը նշանակում է մեկական ներկայացուցիչ: Կոնվենցիայի իրականացման նկատմամբ վերահսկողություն իրականացնող կոմիտեն կարող է անհրաժեշտության դեպքում միաձայն որոշմամբ հրավիրել Կոնվենցիայի Կողմ չհանդիսացող յուրաքանչյուր պետության, յուրաքանչյուր միջազգային կազմակերպության կամ մարմնի՝ իր նիստերի ժամանակ որպես դիտորդ ներկայանալու համար: Սույն կետի համաձայն նշանակված ներկայացուցիչները Կոնվենցիայի իրականացման նկատմամբ վերահսկողություն իրականացնող կոմիտեի նիստերին մասնակցում են առանց ձայնի իրավունքի:

4. Կոնվենցիայի իրականացման նկատմամբ վերահսկողություն

իրականացնող կոմիտեի նիստը գումարվում է Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարի կողմից: Դրա առաջին նիստն անցկացվում է որքան հնարավոր է շուտ եւ ամեն դեպքում՝ Կոնվենցիան ուժի մեջ մտնելուց հետո մեկ տարվա ընթացքում: Այնուհետեւ նիստը գումարվում է, երբ Կողմերի առնվազն մեկ երրորդը կամ Գլխավոր քարտուղարը դա է պահանջում:

5. Կոնվենցիայի իրականացման նկատմամբ վերահսկողություն իրականացնող կոմիտեն սույն Կոնվենցիայի դրույթների պահպանմամբ մշակում եւ ընդհանուր համաձայնությամբ ընդունում է իր ընթացակարգային կանոնները:

6. Իր գործառույթների իրականացման հարցում Կոնվենցիայի իրականացման նկատմամբ վերահսկողություն իրականացնող կոմիտեին աջակցում է Եվրոպայի խորհրդի քարտուղարությունը:

Հոդված 31. Կոնվենցիայի իրականացման նկատմամբ վերահսկողություն իրականացնող կոմիտեի գործառույթները

1. Կոնվենցիայի իրականացման նկատմամբ վերահսկողություն իրականացնող կոմիտեն պատասխանատու է սույն Կոնվենցիայի իրականացման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու համար:

2. Կոնվենցիայի իրականացման նկատմամբ վերահսկողություն իրականացնող կոմիտեն ընդունում եւ փոփոխում է 3.2 հոդվածում նշված մարզական կազմակերպությունների ցանկը՝ միաժամանակ ապահովելով, որ այն պատշաճ ձեով հրապարակվի:

3. Կոնվենցիայի իրականացման նկատմամբ վերահսկողություն իրականացնող կոմիտեն կարող է մասնավորապես՝

ա. Կողմերին ներկայացնել առաջարկություններ՝ սույն Կոնվենցիայի նպատակների համար ձեռնարկվելիք միջոցների վերաբերյալ, մասնավորապես՝ միջազգային համագործակցության հետ կապված.

բ. անհրաժեշտության դեպքում Կողմերին ներկայացնել առաջարկություններ բացատրական փաստաթղթերի հրապարակումից եւ մարզական կազմակերպությունների ու մարզական խաղադրույքների օպերատորների ներկայացուցիչների հետ նախնական խորհրդակցություններից հետո, մասնավորապես՝

- այն չափորոշիչների մասին, որոնց պետք է բավարարեն մարզական կազմակերպությունները եւ մարզական խաղադրույքների օպերատորները՝ սույն

Կոնվենցիայի 12.1 հոդվածով նախատեսված տեղեկությունների փոխանակումից օգտվելու համար.

- այլ այնպիսի միջոցների մասին, որոնք ուղղված են պետական իշխանության մարմինների, մարզական կազմակերպությունների եւ խաղադրույքների օպերատորների միջեւ օպերատիվ համագործակցության ընդլայնմանը, ինչպես նշված է սույն Կոնվենցիայում.

գ. համապատասխան միջազգային կազմակերպություններին եւ հանրությանը տեղեկացված պահել սույն Կոնվենցիայի շրջանակներում ձեռնարկված գործողությունների վերաբերյալ.

դ. Նախարարների կոմիտեի համար պատրաստել եզրակացություն Եվրոպայի խորհրդի անդամ չհանդիսացող յուրաքանչյուր այն պետության հարցման վերաբերյալ, որին Նախարարների կոմիտեն առաջարկում է ստորագրել Կոնվենցիան՝ համաձայն 32.2 հոդվածի:

4. Իր գործառույթներն իրականացնելու համար Կոնվենցիայի իրականացման նկատմամբ վերահսկողություն իրականացնող կոմիտեն կարող է իր նախաձեռնությամբ կազմակերպել փորձագետների հանդիպումներ:

5. Կոնվենցիայի իրականացման նկատմամբ վերահսկողություն իրականացնող կոմիտեն տվյալ Կողմերի հետ նախնական համաձայնությամբ կազմակերպում է այցելություններ Կողմեր:

Հոդված 32. Ստորագրումը եւ ուժի մեջ մտնելը

1. Սույն Կոնվենցիան բաց է Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների, Եվրոպական մշակութային կոնվենցիայի մյուս Կողմ պետությունների, Եվրոպական միության եւ Կոնվենցիայի մշակման գործընթացին մասնակցած կամ Եվրոպայի խորհրդում դիտորդի կարգավիճակ ունեցող՝ անդամ չհանդիսացող պետությունների կողմից ստորագրման համար:

2. Սույն Կոնվենցիան բաց է նաեւ Եվրոպայի խորհրդի անդամ չհանդիսացող ցանկացած այլ պետության կողմից ստորագրման համար՝ Նախարարների կոմիտեի կողմից առաջարկվելու դեպքում: Անդամ չհանդիսացող պետությանը Կոնվենցիան ստորագրելու առաջարկ ներկայացնելու մասին որոշումն ընդունվում է Եվրոպայի խորհրդի կանոնադրության 20-րդ հոդվածի «դ» կետով նախատեսված ձայների մեծամասնությամբ եւ Նախարարների կոմիտեի անդամ լինելու իրավունք ունեցող՝ Պայմանավորվող պետությունների ներկայացուցիչների միաձայն քվեով՝ Կոնվենցիայի իրականացման նկատմամբ վերահսկողություն իրականացնող

կոմիտեի հետ խորհրդակցելուց հետո:

3. Սույն Կոնվենցիան ենթակա է վավերացման, ընդունման կամ հաստատման: Վավերացման, ընդունման կամ հաստատման մասին փաստաթղթերն ի պահ են հանձնվում Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին:

4. Սույն Կոնվենցիան ուժի մեջ է մտնում հինգ ստորագրող կողմերի, այդ թվում՝ Եվրոպայի խորհրդի առնվազն երեք անդամ պետությունների կողմից 1-ին, 2-րդ եւ 3-րդ կետերի դրույթների համաձայն սույն Կոնվենցիայով նախատեսված պարտավորություններն ստանձնելու մասին իրենց համաձայնությունը տալու օրվանից հետո՝ եռամսյա ժամկետը լրանալուն հաջորդող ամսվա առաջին օրը:

5. Որեւէ ստորագրող Պետության կամ Եվրոպական միության համար, որը հետագայում տալիս է դրանով պարտավորված լինելու համաձայնություն, Կոնվենցիան ուժի մեջ է մտնում Կոնվենցիայով պարտավորված լինելու մասին համաձայնությունը տալուց հետո եռամսյա ժամկետի ավարտին հաջորդող ամսվա առաջին օրը՝ 1-ին, 2-րդ եւ 3-րդ կետերի դրույթներին համապատասխան:

6. Եվրոպայի խորհրդի անդամ չհանդիսացող ցանկացած Պայմանավորվող կողմ օժանդակում է Կոնվենցիայի իրականացման նկատմամբ վերահսկողություն իրականացնող կոմիտեի ֆինանսավորմանը Նախարարների կոմիտեի կողմից սահմանվող կարգով՝ այդ Կողմի հետ խորհրդակցելուց հետո:

Հոդված 33. Կոնվենցիայի գործողությունը եւ կապն այլ միջազգային փաստաթղթերի հետ

1. Սույն Կոնվենցիան չի ազդում Կողմերի իրավունքների եւ պարտավորությունների վրա, որոնք նախատեսված են կոնկրետ թեմաների վերաբերյալ միջազգային բազմակողմ կոնվենցիաներով: Մասնավորապես սույն Կոնվենցիան չի փոխում նրանց իրավունքներն ու պարտականությունները, որոնք բխում են դոպինգի դեմ պայքարի համար նախկինում կնքված եւ սույն Կոնվենցիայի առարկային եւ նպատակին համապատասխանող այլ համաձայնագրերից:

2. Սույն Կոնվենցիան լրացնում է անհրաժեշտության դեպքում մասնավորապես Կողմերի միջեւ կիրառելի բազմակողմ կամ երկկողմ պայմանագրերը, այդ թվում՝ հետեւյալի դրույթները՝

ա. «Հանձնման մասին» Եվրոպական կոնվենցիա (1957թ., ԵՊՇ թիվ 24).

բ. «Քրեական գործերով փոխադարձ օգնության մասին» Եվրոպական կոնվենցիա (1959թ., ԵՊՇ թիվ 30).

գ. «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների լվացման, հետախուզման, առգրավման եւ բռնագրավման մասին» կոնվենցիա (1990թ., ԵՊՇ թիվ 141).

դ. «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների լվացման, հետախուզման, առգրավման եւ բռնագրավման եւ ահաբեկչության ֆինանսավորման մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիա (2005թ., ԵԽՊՇ թիվ 198):

3. Կոնվենցիայի Կողմերը կարող են սույն Կոնվենցիայով նախատեսված հարցերի վերաբերյալ միմյանց հետ կնքել երկկողմ կամ բազմակողմ պայմանագրեր՝ Կոնվենցիայի դրույթները լրացնելու կամ ամրապնդելու կամ դրանում ամրագրված սկզբունքների կիրառումը խթանելու նպատակով:

4. Եթե երկու կամ ավելի Կողմեր արդեն պայմանագիր են կնքել սույն Կոնվենցիայով կարգավորվող հարցերի վերաբերյալ կամ այլ կերպ հարաբերություններ են հաստատել այդ հարցերի առնչությամբ, ապա նրանք նույնպես իրավունք ունեն կիրառելու այդ պայմանագիրը կամ համապատասխանաբար կարգավորելու այդ հարաբերությունները: Այնուամենայնիվ, երբ Կողմերը հարաբերություններ են հաստատում սույն Կոնվենցիայով կարգավորվող հարցերի առնչությամբ՝ բացառությամբ դրանում նախատեսված դեպքերի, նրանք դա պետք է անեն այնպես, որ չհակասի Կոնվենցիայի նպատակներին եւ սկզբունքներին:

5. Սույն Կոնվենցիայում ոչինչ չի ազդում Կողմերի այլ իրավունքների, սահմանափակումների, պարտավորությունների եւ պարտականությունների վրա:

Հոդված 34. Պայմանները եւ երաշխիքները

1. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ II-VII գլուխներով նախատեսված լիազորությունների եւ ընթացակարգերի սահմանումը, իրականացումը եւ կիրառումը ենթակա լինեն իր ներպետական օրենսդրությամբ նախատեսված պայմաններին եւ երաշխիքներին, որոնք նախատեսում են մարդու իրավունքների եւ ազատությունների համարժեք պաշտպանություն, այդ թվում՝ այն իրավունքների, որոնք բխում են «Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի, «Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների մասին» 1966 թվականի միջազգային դաշնագրի եւ մարդու իրավունքների վերաբերյալ կիրառելի այլ միջազգային փաստաթղթերի համաձայն ստանձնած պարտավորություններից, եւ որոնցով իր ներպետական օրենսդրության մեջ կներառվի համաչափության սկզբունքը:

2. Այդ պայմաններն ու երաշխիքները, համապատասխան ընթացակարգի կամ լիազորության բնույթից ելնելով, *inter alia*, ներառում են դատական կամ այլ անկախ վերահսկողությունը, դիմումը հիմնավորող հիմքեր, ինչպես նաեւ այդ լիազորության կամ ընթացակարգի շրջանակի եւ տեւողության սահմանափակում:

3. Այնքանով, որքանով դա համահունչ է հանրային շահերին, մասնավորապես՝ արդարադատության պատշաճ իրականացմանը, յուրաքանչյուր Կողմ հաշվի է առնում սույն գլուխներով սահմանված լիազորությունների եւ ընթացակարգերի ազդեցությունը երրորդ անձանց իրավունքների, պարտականությունների եւ օրինական շահերի վրա:

Հոդված 35. Տարածքային կիրառությունը

1. Ցանկացած Պետություն կամ Եվրոպական միությունը վավերացման, ընդունման կամ հաստատման մասին իր փաստաթուղթն ստորագրելու պահին կամ այն ի պահ հանձնելու ժամանակ կարող է նշել այն տարածքը կամ տարածքները, որոնց նկատմամբ սույն Կոնվենցիան կիրառվելու է:

2. Ցանկացած Կողմ կարող է վերոնշյալ գործողությունից ավելի ուշ Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին հասցեագրված հայտարարությամբ սույն Կոնվենցիայի կիրառությունը տարածել հայտարարության մեջ նշված ցանկացած այլ տարածքի վրա, որի արտաքին հարաբերությունների համար այն պատասխանատու է, կամ որի անունից այն լիազորված է գործել: Այդ տարածքի համար Կոնվենցիան ուժի մեջ է մտնում հայտարարությունը Գլխավոր քարտուղարի կողմից ստանալու օրվանից հետո՝ եռամսյա ժամկետը լրանալուն հաջորդող ամսվա առաջին օրը:

3. Այդ հայտարարության մեջ նշված ցանկացած տարածքի առնչությամբ նախորդ երկու պարբերությունների համաձայն արված ցանկացած հայտարարություն կարող է հետ վերցվել Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին հասցեագրված ծանուցմամբ: Հետ վերցնելն ուժի մեջ է մտնում այդ ծանուցումը Գլխավոր քարտուղարի կողմից ստանալու օրվանից հետո՝ եռամսյա ժամկետը լրանալուն հաջորդող ամսվա առաջին օրը:

Հոդված 36. Դաշնային դրույթը

1. Դաշնային պետությունը կարող է իրավունք վերապահել ստանձնելու պարտավորություններ՝ համաձայն սույն Կոնվենցիայի II, IV, V եւ VI գլուխների, որը կհամապատասխանի իր հիմնարար սկզբունքներին, որոնցով կարգավորվում են փոխհարաբերություններն իր կենտրոնական կառավարության եւ հիմնադիր

պետությունների կամ այլ նմանատիպ տարածքային կառույցների միջեւ՝ պայմանով, որ դեռ կկարողանա համագործակցել III եւ VII գլուխների համաձայն:

2. 1-ին կետի համաձայն վերապահում կատարելիս դաշնային պետությունը չի կարող կիրառել վերապահման այնպիսի պայմաններ, որոնք կբացառեն կամ էապես կնվազեցնեն իր պարտավորությունները՝ III եւ VII գլուխներով սահմանված միջոցներն ապահովելու համար: Ընդհանուր առմամբ այն ապահովում է լայն եւ արդյունավետ կիրառման հնարավորություններ՝ կապված այդ միջոցների հետ:

3. Ինչ վերաբերում է սույն Կոնվենցիայի դրույթներին, որոնց կիրառումը գտնվում է յուրաքանչյուր հիմնադիր պետության կամ այլ նմանատիպ տարածքային կառույցի իրավագործության ներքո, որոնք դաշնության սահմանադրական համակարգի համաձայն պարտավոր չեն ձեռնարկել օրենսդրական միջոցներ, դաշնային կառավարությունն իր դրական եզրակացությամբ տեղեկացնում է այդ Պետությունների իրավասու մարմիններին վերոհիշյալ դրույթների մասին՝ խրախուսելով նրանց ձեռնարկել համապատասխան միջոցներ՝ դրանք կիրառելու համար:

Հոդված 37. Վերապահումները

1. Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին ուղղված գրավոր ծանուցման միջոցով յուրաքանչյուր Պետություն կամ Եվրոպական միությունը ստորագրման պահին կամ վավերացման, ընդունման կամ հաստատման մասին փաստաթուղթն ի պահ հանձնելու ժամանակ կարող է հայտարարել, որ կարող է օգտվել 19-րդ հոդվածի 2-րդ կետով եւ 36-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված վերապահումներից: Որեւէ այլ վերապահում չի կարող կատարվել:

2. 1-ին կետին համապատասխան վերապահում կատարած Կողմը կարող է Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին ուղղված ծանուցման միջոցով ամբողջությամբ կամ մասնակիորեն հանել այն: Վերապահումը հանելն ուժի մեջ է մտնում Գլխավոր քարտուղարի կողմից այդ ծանուցումն ստանալու օրվանից: Եթե ծանուցման մեջ նշվում է, որ վերապահումը հանելն ուժի մեջ է մտնում այնտեղ նշված օրվանից, եւ այդ օրն ավելի ուշ է, քան գլխավոր քարտուղարի կողմից ծանուցումն ստանալու օրն է, ապա վերապահումն ուժի մեջ է մտնում այդ ավելի ուշ ընկած օրվանից:

3. Վերապահում կատարած Կողմն առաջին իսկ հնարավորության դեպքում ամբողջությամբ կամ մասնակիորեն հանում է այդ վերապահումը:

4. Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարը կարող է մեկ կամ ավելի

վերապահումներ կատարած Կողմերին պարբերաբար հարցնել վերապահումը (վերապահումները) հանելու հեռանկարների վերաբերյալ մանրամասների մասին:

Հոդված 38. Փոփոխությունները

1. Սույն Կոնվենցիայի հոդվածներում փոփոխություններ կարող է առաջարկել ցանկացած Կողմ, Կոնվենցիայի իրականացման նկատմամբ վերահսկողություն իրականացնող կոմիտեն կամ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեն:

2. Սույն Կոնվենցիայում փոփոխություն կատարելու վերաբերյալ Կողմի ներկայացրած ցանկացած առաջարկ փոխանցվում է Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին, իսկ վերջինիս կողմից ուղարկվում է Կողմերին, Եվրոպայի խորհրդի անդամ պետություններին, սույն Կոնվենցիայի մշակման գործընթացին մասնակցած կամ Եվրոպայի խորհրդում դիտորդի կարգավիճակ ունեցող՝ անդամ չհանդիսացող պետություններին, Եվրոպական միությանը եւ սույն Կոնվենցիան ստորագրելու առաջարկ ստացած ցանկացած Պետության եւ Կոնվենցիայի իրականացման նկատմամբ վերահսկողություն իրականացնող կոմիտեին այն նիստից առնվազն երկու ամիս առաջ, որի ընթացքում այն պետք է քննարկվի: Կոնվենցիայի իրականացման նկատմամբ վերահսկողություն իրականացնող կոմիտեն Նախարարների կոմիտեին ներկայացնում է առաջարկված փոփոխության վերաբերյալ իր կարծիքը:

3. Նախարարների կոմիտեն քննարկում է առաջարկված փոփոխությունն ու Կոնվենցիայի իրականացման նկատմամբ վերահսկողություն իրականացնող կոմիտեի կողմից ներկայացված ցանկացած կարծիք եւ կարող է ընդունել փոփոխությունը՝ Եվրոպայի խորհրդի կանոնադրության 20-րդ հոդվածի «դ» կետով նախատեսված մեծամասնությամբ:

4. Սույն հոդվածի 3-րդ կետին համապատասխան Նախարարների կոմիտեի կողմից ընդունված ցանկացած փոփոխության տեքստ ուղարկվում է Կողմերին՝ ընդունման համար:

5. Սույն հոդվածի 3-րդ կետին համապատասխան ընդունված ցանկացած փոփոխություն ուժի մեջ է մտնում բոլոր Կողմերի կողմից իրենց համապատասխան ներքին ընթացակարգերն ավարտելուց հետո այդ փոփոխությունն ընդունելու մասին Գլխավոր քարտուղարին հայտնելու օրվանից հետո՝ մեկամսյա ժամկետը լրանալուն հաջորդող ամսվա առաջին օրը:

6. Եթե փոփոխությունն ընդունվել է Նախարարների կոմիտեի կողմից, սակայն դեռեւս ուժի մեջ չի մտել 5-րդ կետին համապատասխան, ապա Պետությունը

կամ Եվրոպական միությունը չի կարող Կոնվենցիայով պարտավորված լինելու վերաբերյալ իր համաձայնությունը հայտնել, եթե միաժամանակ չի ընդունում փոփոխությունը:

Հոդված 39. Վեճերի կարգավորումը

1. Կոնվենցիայի իրականացման նկատմամբ վերահսկողություն իրականացնող կոմիտեն Եվրոպայի խորհրդի համապատասխան միջկառավարական կոմիտեների հետ սերտ համագործակցությամբ պետք է տեղեկացված լինի սույն Կոնվենցիայի մեկնաբանման եւ կիրառման հետ կապված ցանկացած դժվարության մասին:

2. Սույն Կոնվենցիայի մեկնաբանման կամ կիրառման վերաբերյալ Կողմերի միջեւ վեճ առաջանալու դեպքում նրանք պետք է ձգտեն վեճը կարգավորել բանակցությունների, հաշտեցման կամ արբիտրաժի միջոցով կամ այլ խաղաղ միջոցներով՝ իրենց ընտրությամբ:

3. Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեն կարող է սահմանել վեճերի կարգավորման ընթացակարգեր, որոնք կարող են կիրառվել վեճի Կողմերի կողմից՝ նրանց համաձայնության դեպքում:

Հոդված 40. Կոնվենցիայից դուրս գալը

1. Յուրաքանչյուր Կողմ կարող է ցանկացած ժամանակ դուրս գալ սույն Կոնվենցիայից՝ Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին ուղղված ծանուցման միջոցով:

2. Կոնվենցիայից դուրս գալն ուժի մեջ է մտնում այդ ծանուցումը Գլխավոր քարտուղարի կողմից ստանալու օրվանից հետո՝ եռամսյա ժամկետը լրանալուն հաջորդող ամսվա առաջին օրը:

Հոդված 41. Ծանուցումը

1. Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարը Կողմերին, Եվրոպայի խորհրդի անդամ պետություններին, Եվրոպական մշակութային կոնվենցիայի կողմ հանդիսացող մյուս պետություններին, սույն Կոնվենցիայի մշակման գործընթացին մասնակցած կամ Եվրոպայի խորհրդում դիտորդի կարգավիճակ ունեցող՝ անդամ չհանդիսացող պետություններին, Եվրոպական միությանը եւ սույն Կոնվենցիան

ստորագրելու առաջարկ ստացած ցանկացած Պետության, 32-րդ հոդվածի դրույթներին համապատասխան, ծանուցում է հետեւյալի մասին.

ա. ցանկացած ստորագրման,

բ. վավերացման, ընդունման կամ հաստատման մասին ցանկացած փաստաթուղթ ի պահ հանձնելու,

գ. 32-րդ հոդվածին համապատասխան՝ սույն Կոնվենցիան ուժի մեջ մտնելու ցանկացած ժամկետի,

դ. 37-րդ հոդվածին համապատասխան կատարված ցանկացած վերապահման եւ այդ վերապահումը հանելու,

ե. 9-րդ եւ 13-րդ հոդվածներին համապատասխան արված ցանկացած հայտարարության,

զ. սույն Կոնվենցիային առնչվող ցանկացած այլ փաստաթղթի, ծանուցման կամ փոխանցված տեղեկության:

Ի հաստատումն որի՝ ներքոստորագրյալները, պատշաճ կերպով լիազորված լինելով, ստորագրեցին սույն Կոնվենցիան:

Կատարված է Մագլինգեն/Մաքոլինում 2014 թվականի սեպտեմբերի 18-ին, անգլերենով եւ ֆրանսերենով. երկու տեքստերն էլ հավասարազոր են, որոնք ի պահ են հանձնվում Եվրոպայի խորհրդի արխիվներ: Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարը վավերացված օրինակները փոխանցում է Եվրոպայի խորհրդի յուրաքանչյուր անդամ պետության, սույն Կոնվենցիայի մշակման գործընթացին մասնակցած կամ Եվրոպայի խորհրդում դիտորդի կարգավիճակ ունեցող՝ անդամ չհանդիսացող պետություններին, Եվրոպական միությանը եւ սույն Կոնվենցիան ստորագրելու առաջարկ ստացած ցանկացած պետության:

Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը 2014 թվականի սեպտեմբերի 18-ին ստորագրված «Մարզական մրցումների մեքենայությունների մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի հայերեն պաշտոնական թարգմանությունն է:



**Հայաստանի Հանրապետության
արտաքին գործերի նախարարություն**